ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 դեկտեմբերի 2025 թվականի N 1905 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2022 ԹՎԱ-ԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 17-Ի N 1763-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի նոյեմբերի 17-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՀՐԱՇՔ ԳՐՈՒՊ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 1763-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունները՝

1) 8-րդ կետի «Քանակը» սյունակում «5 000» թիվը փոխարինել «15 000» թվով.

2) 22-րդ կետի «Քանակը» սյունակում «1 000» թիվը փոխարինել «5 000» թվով.

3) 25-րդ կետի «Քանակը» սյունակում «132 000» թիվը փոխարինել «180 000» թվով.

4) 30-րդ կետի «Քանակը» սյունակում «10000» թիվը փոխարինել «40 000» թվով.

5) ցանկը 31-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 32-րդ կետով.

«

32.	5811000000	Տրիկոտաժե գործվածք	---Մգդակված մանածագործական նյութերից կտորով՝ մեկ կամ մի քանի մանածագործական նյութերի շերտերից/ Մգդակված մանածագործական նյութերից պատրաստված, բացառապես քիմիական թելերից բաղկացած հատուկ/ ներքնակների արտադրության համար/ տրիկոտաժե գործվածք /Boyteks մակնշմամբ/	$մ^2$	300 000	Վրաստան, Թուրքիա, Չինաստան	Վրաստան, Թուրքիա, Չինաստան	115 100 000	

».

6) հավելվածի ցանկի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերությունում «1 396 465 000» թիվը փոխարինել «1 511 565 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

19.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ